

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱԻԱՏԸ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԲԱՆԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Բանականությունը մարդուն վերաբերող յատկանիշ է, նրա այն բացառիկ կարողությունը, որով նա յարաբերութեան մեջ է մտնում ամեն ինչի հետ և ըստ այնմ ծրագրում իր անելիքները: Մարդը բանական էակ է: Բանականությունն ինքնին անսահման է և անթերի, իսկ մեր ունեցածը այդ ընդհանուր բանականութեան մեկ մասնիկն է, որ կազմում է մեր գիտելիքների բաժինը, թերի է ու սահմանափակ: Մեր մարդկային գիտությունը ենթակա է բանականութեան, կախում ունի նրանից, իսկ այն անկախ է մեր գիտությունից:

Միև կողմից էլ այն ճշմարտությունները, որոնք ուղղակի կապ ունեն մարդու հոգեկան փրկութեան ու պայծառացման հետ, ճանաչելի են միայն հաւատով, դրանցից են, օրինակ, Աստծոյ գոյությունը, Ս. Երրորդության խորհուրդը, Քրիստոսի մարդեղությունը, Եկեղեցու խորհուրդները, յաւիտենական կեանքը, և այլն:

Այդ հաւատը, սակայն, գոյութիւն չէր ունենայ, եթէ մարդ օժտուած չլիներ բանականութեամբ: Անբան անասունները դրանից զուրկ են: Այս չի նշանակում, թէ հաւատը կախում ունի բանականութենից, բայց առանց նրա էլ հաւատի հարցերը մնում են անհասկանալի և անմերժեցալի: Հաւատի համար բանականությունը բաւարար նախապայման չէ, բայց անհրաժեշտ պայման է:

Բանականութեան և հաւատի միջև չպետք է հակասութիւն ստեղծել, թեւ, ինչպէս նշեցինք, մէկը միւսից կախում չունի, բայց ներդաշնակ գոյակցութեան դէպքում իրար ճոխացնում են: Սկզբից պետք է յստակ լինի այն, որ բանականութեան ու հաւատի միջև թեւ սահման գոյութիւն ունի, սակայն կայ նաև մի ազատ միջոց, ուր նրանք հանդիպում են միմեանց: Նա, ով դէմ է դուրս գալիս բանականութեան, ինքնաբերաբար դէմ է դուրս գալիս նաև հաւատին, քանզի բանականութիւնն ինքնին աստուածային մի շնորհք է, որով մենք մասնւում ենք Աստծուն և կապւում Նրա հետ, զանազանում իրականութիւնն ու ճշմարտութիւնը խաբեպատիր երևոյթներից, կեանքը՝ մահից, յաւիտենականը՝ անցողականից: Այս իմաստով էլ, սխալ ենք գտնում XVI-րդ դարի բողոքական բարեկարգիչներից ոմանց դրսևորած արհամարհական վերաբերմունքը մարդկային բանականութեան նկատմամբ, որակելով այն իբրև «սատանայի պոռնիկը» կամ «պոռնիկ բանականութիւն» (Hurenverunft)⁽¹⁾:

Գերմանացի նշանաւոր փիլիսոփայ Իմմանուէլ Կանտը (1724-1804) իր «Ձուտ բանականութեան քննադատութիւնը» գործով նպատակ չի ունեցել դէմ դուրս գալու բանականութեան, քանզի այդ անելու համար, միևնոյնն է, նա դարձեալ դիմելու էր բանականութեան օգնութեանը, այլ նա ցոյց է տալիս հաւատի անկախութիւնը նրանից, այն աստիճան, որ յայտարարում է. «Բարոյական և գիտական

վարդապետութիւնները ճշմարիտ են իւրաքանչիւրն իր ոլորտում, մի բան, որ հնարաւոր պիտի չլինէր ապացուցել, եթէ քննադատութիւնը նախօրօք մեզ ցոյց չտար երևելի աշխարհի վերաբերեալ ունեցած մեր տգիտութիւնը և չդասակարգէր պարզ գիտելիքների մակարդակում այն, ինչ որ տեսականօրէն ճանաչում ենք: ...Դրա համար էլ, ես անհրաժեշտ եմ համարել մերժել Աստծու, ազատութեան և անմահութեան վերաբերեալ գիտութիւնը, որպէսզի տեղ բացեմ հաւատին»⁽²⁾:

Միւս կողմից էլ բանականութիւնը, եթէ եսակենտրոն ինքնաբաւութեան պատուանդանի վրայ չէ դրուած, օգտուում է հաւատից, որն իր հերթին նորանոր ճշմարտութիւններով ճոխացնում է այն, բարձրացնում դէպի երկնայինը, փոխանցում նրան այն հիմնահարցերի պատասխանները, որոնք վերաբերում են մարդու և տիեզերքի բնագանցական ոլորտներին:

Բանականութեան միջոցով մի բան ապացուցելու համար հարկ է սկսել այնպիսի մի բանից, որը մինչայդ անկարելի է եղել ապացուցել, այլապէս, Արիստոտելի ասածի համաձայն, կ'ընկնենք յաւիտեական կրկնողութեան մէջ՝ վկայակոչելով արդէն իսկ նախապէս մեր ձեռք բերած ապացոյցները, որով ոչնչի չենք հասնի⁽³⁾: Իսկ փորձել ամեն ինչ ապացուցել, դա արդէն իսկ տգիտութիւն է: Հետևաբար, տրամաբանութիւնը սկսում է ինչ-որ անապացուցանելի մի մեկնակէտից՝ հասնելով համեմատաբար բանական եզրակացութիւնների:

Պէտք է ասել, որ վաղ ժամանակներում, քրիստոնէական կրօնի ջատագովներն ու քարոզիչները, հաւատի որևէ ճշմարտութիւն բացայայտելու համար, միշտ դիմել են մարդկային բանականութեանը և օգտագործել դրա արդիւնքը հանդիսացող լեզուաբանական բանաձևումներն ու ոճային արտայայտչաձևերը՝ հաստատելու համար, օրինակ, թէ «Բանն մարմին եղև»: Բայց այս հաստատումին իսկական պատճառը ոչ թէ բանականութիւնն է, այլ աստուածային յայտնութիւնը: Նոյնիսկ երբ ասում ենք, թէ Աստուած գոյութիւն ունի կամ «անճառելի» է, ինքնին, արդէն իսկ «ճառում» ենք նրա մասին:

Եկեղեցու հայրերից Կղենտ Աղեքսանդրացին (150-215) հաստատում է, թէ հաւատը հետամուտ է բանականութեան: Այս առնչութեամբ գրում է.

«Հաստատում ենք, որ հաւատն ինքնին գործուն է և արգասաբեր, բայց սա չի նշանակում, թէ չպէտք է երբեք հետազօտութիւններ կատարենք. «Փնտռի՛ր և կը գտնես» (Մտթ. է 7, Ղկս. ԺԱ 9): Հարկ է սրել հոգու տեսողութիւնը, ուսումնասիրութիւններով...: Պարզ է, որ Աստծու վերաբերեալ հետազօտութիւնը, եթէ բանավիճելու մտօք չի արւում, այլ պարզապէս Նրան գտնելու ջանադրութեամբ, առաջնորդում է դէպի փրկութիւն: Դրա համար էլ Դաւիթը գրում է. «Տնանկները պիտի յագեման, Տիրոջը պիտի փառաբանեն նրանք, ովքեր փնտռում են նրան, նրանց սրտերը կ'ապրեն յաւիտեան» (Սղմս. ԻԱ 27):

Իմացութեամբ (gnosis) կատարելագործում է հաւատը: Միայն նրանով է, որ հաւատացեալը հասնում է իր կատարելութեան: Քանզի հաւատը ներքին մի հարստութիւն է, որն Աստծու վերաբերեալ քննարկումներ չի կատարում, այլ խոստովանում է Նրա գոյութիւնը և կառչում Նրանից, մինչդեռ քրիստոնէական

իմացութիւնը ամրակուռ բացատրութիւնն է այն ամենի, ինչ որ ընդունուած է հաւատի միջոցով»⁽⁴⁾ :

Բանապաշտութիւնը կամ ռացիոնալիզմը

Բանապաշտութիւնը կամ ռացիոնալիզմը մի գաղափարախօսութիւն է և միաժամանակ փիլիսոփայութեան մէջ մեթոդաբանական մի ուղղութիւն, որ թէև գոյութիւն է ունեցել անտիկ ժամանակներում, սակայն իբրև փիլիսոփայական համակարգ իր լրումին է հասել նոր ժամանակներում:

Ռացիոնալիզմը, հետևելով մաթեմատիկական հիմունքների օրինակին, ժխտում է գերբնական որևէ յայտնութիւն, ինչպես նաև զգայական (sensual) կամ փորձնական (empiric) ճանապարհով ձեռք բերուած որևէ գիտելիք, երբ այն զուտ բանականութեան արդիւնք չէ: Այս պարագայում բանականութիւնը նկատուում է իբրև միակ և բացարձակ աղբիւր ճանաչողութեան, ըստ որում փիլիսոփայութիւնը պարզապէս վերածուում է գաղափարների, հասկացութիւնների և հաստատումների մի համակարգի:

Համաձայն ռացիոնալիզմի՝ իրականն ու ճշմարիտը միայն այն է, որ մտաչելի է բանականութեան, ինչ որ բխում է նրանից: Նոր միայն Լուսաւորականութեան դարաշրջանի վերջաւորութեան (ԺԸ դար) ռացիոնալիզմը կարողացաւ դիրքեր գրաւել նաև աստուածաբանութեան մէջ, որով հաւատի հարցերում ջանաց ընդունել միայն այն, ինչ որ կարելի է բանականութեամբ հիմնաւորել, մերժելով այն, ինչ որ հրաշագործութիւնների թւում է և մաս է կազմում հաւատի բացառապէս գերբնական տարրերին:

Փիլիսոփայութեան մէջ ժամանակակից ռացիոնալիստական ուղղութեան հիմնադիր է համարում ֆրանսիացի մաթեմատիկոս, բնագէտ և փիլիսոփայ Ռենե Դեկարտը (1596-1650), որն սկզբում որդեգրում է այն սկզբունքը, թէ ամեն ինչի հաւաստիութեան վրայ պետք է կասկածել, լինեն դրանք աւանդական գաղափարներ կամ զգայարանքների միջոցով ընկալուող իրականութիւններ: Կասկած չի վերցնում միայն այն իրողութիւնը, թէ ամեն ինչ կասկածելի է, և հենց սա էլ ինքնին մի տեսակ մտածել է: Հետևաբար, Կասկածել, ըստ Դեկարտի, նշանակում է մտածել: Այնուհետև նա եզրակացնում է. «Մտածում եմ, ուրեմն գոյութիւն ունեմ» (cogito, ergo sum) և դրանով նա կառչում է բանականութիւնից, որ մարդկային մտածելու կարողութեան հիմքն է:

Բանականութեան ճանապարհով Դեկարտը հասնում է նաև Աստծոյ գաղափարին, որն ինքն իր մէջ պարփակում է մի կատարեալ իսկութիւն: Այդ գաղափարը ոչ թէ բանականութեան արտադրանքն է, այլ նրանում տեղադրուած մի միտք է, որի հեղինակը հենց ինքը՝ Աստուած է: Այդ գաղափարի առկայութիւնն ինքնին ապացոյց է Աստծոյ գոյութեան, որն անսկիզբ է և անստեղծ:

Ի հակադրութիւն Դեկարտի, որի փիլիսոփայական ներդրումը դրական իմաստով իր բացառիկ տեղն ունի ժամանակակից մտածելակերպում, ֆրանսիացի

մի այլ փիլիսոփայ և մաթեմատիկոս Բլեզ Պասկալը (1623-1662), ընդունելով հանդերձ մարդկային բանականության կարևորությունը, մերժում է Աստծու վերաբերեալ զուտ փիլիսոփայական յայտնաբերումները: Ըստ նրա՝ Աստուած ոչ թե ունեւաների կամ փիլիսոփաների Աստուածն է, այլ «Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Յիսուսի Աստուածը», այսինքն՝ առաջին հերթին հաւատի մարդոց և միայն հաւատով ըմբռնելի: Հետևաբար, ի հեճուկս Դեկարտի եզրայանգման՝ «մտածում եմ, ուրեմն գոյութիւն ունեմ», նա հաստատում է՝ «Հաւատում եմ, հետևաբար գոյութիւն ունեմ» (*credo, ergo sum*): Սարղը ճանաչում է Աստծուն իր սրտի և ոչ թէ իր բանականութեան միծոցով, և հաւատը հենց սրանում է: Սիրտն ունի իր օրէնքները, որոնք բանականութիւնը չգիտէ⁽⁵⁾:

Լուսաւորականութեան շարժումը (*Aufklärung, Illustration*), որ ժե դարում սկսուեց նախ Անգլիայում և ապա թափանցեց Ֆրանսիա ու Գերմանիա, այնուհետև՝ եւրոպական այլ երկրներ, բնորոշւում է մշակութային և մտաւորական այն կարևոր աշխատանքով, որի նպատակն էր՝ փոխարինել եկեղեցական կամ քաղաքական հեղինակութիւնների հովանաւորած աւանդական գաղափարները այնպիսիներով, որոնք մարդկային զուտ բանականութիւնից են բխում և կարող են դիմանալ տրամաբանական որևէ քննադատութեան:

Այսպիսով, քաջալերուած ձեռք բերուած նոր գիտելիքներով, Լուսաւորականութեան դարաշրջանի մարդը ակնկալում էր, որ բանականութեան լոյսը շուտով պիտի քօղազերծի ամեն ինչի գոյութեան առեղծուածը: Աստուած թէև չի ժխտւում, սակայն Նրան վերագրւում է կրաւորական կեցուածք Իր ստեղծագործութեան հանդէպ, Նա այլևս նրանով չի զբաղւում (*Deismus*): Քրիստոսը պարզապէս հիմնադիրն է մի կրօնի և ոչ թէ՝ Աստծոյ մարմնացեալ Որդին: Բանականութիւնն է, որ պիտի որոշի թէ ինչպիսին պիտի լինի կրօնի բովանդակութիւնը կամ ինչպիսին ոչ (*Rationalismus*), հետևաբար, Քրիստոսի վարդապետութիւնը պիտի գնահատուի համաձայն բանականութեան պահանջած բարոյական ու բարոյագիտական նորմաների, ուր կարելի չէ ընդունել գերբնական կամ աստուածային որևէ տեսակ յայտնութիւն: Այսպիսով, Լուսաւորականութեան ձեռք բերած դրական արդիւնքները հետգիետէ կերպարանափոխւում են դէպի բանապաշտութիւն գնացող ուղղութեամբ:

Այս միևնույն ժամանակաշրջանում, սկսած Անգլիայից, տարածուելով դէպի Ֆրանսիա, ընդհուպ մինչև Գերմանիայի հիւսիսային տարածքները, հիմնւում են Ազատ Որմնադիրների առաջին օթեակները, որտեղ կանանց և հասարակ մարդկանց մուտքը խստիւ արգելւած էր: Ազատ Որմնադիրները օգտւում են Լուսաւորականութեան պտուղներից և մի նոր մղում են տալիս բանապաշտութեան՝ պատգամելով ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն, հանդուրժողականութիւն: Նման արտայայտութիւններ երբեք խորթ չեն եղել քրիստոնէական կրօնին, այլ, ընդհակառակը, նրա հիմնական սկզբունքներն են կազմում, սակայն բանապաշտութեան և ազատականութեան (*Liberalismus*) ջատագովների կողմից դրանք մի մեկնաբանութիւն են ստանում, հիմնականում հետապնդելով մի սանձարձակ

ազատութիւն մամուլի և հրապարակախօսային տարբեր միջոցների՝ առաջ որևէ կրօնաբարոյական կապի կամ ազդեցութեան: Բանապաշտութեան այս ձևը շեղում է Լուսաւորականութեան կամ դասական ազատականութեան դրական շարժումները իրենց բարի նպատակից և դառնում հակակղերական ու յատկապէս հակաքրիստոնէական մի գաղափարախօսութիւն, մի պարագայ, որն իր յատուկ ձևաւորումն է ստանում Ֆրանսիական Յեղափոխութիւնից յետոյ (1789 թ.):

Աշխարհականացման Շարժումը

Աշխարհականացումը, որ ապակրօնացման մի պրոցես է, մաս է կազմում ժամանակակից մի շարք «առաջադէմ» պետութիւնների ծրագրին: Պատմականօրէն այն սկսուեց Եւրոպայում, յատկապէս բողոքականեան ռեֆորմացիայի և Լուսաւորականութեան շարժման ժամանակ, երբ աշխարհական իշխանաւորները փորձեցին զաւթել եկեղեցական կալուածքները, իսկ գաղափարախօսական գետնի վրայ էլ Գերմանիայում, օրինակ, յայտարարուեց. «cuius regio, eus et religio», այսինքն՝ «երկիրն ունն է՝ կրօնն էլ նրանն է», Կրօնը պետք է համաձայնեցնել քաղաքական իշխանաւորի դաւանանքի հետ⁽⁶⁾ :

Սակայն աշխարհականացման բուն պրոցեսը ոչ թէ իբրև եկեղեցական կալուածքների գրաւում, այլ իբրև եկեղեցու իրաւասութիւնների կրճատում և նրա բացարձակ անջատումը պետութիւնից սկսւում է ձևաւորուել Ֆրանսիական Յեղափոխութեան ժամանակ ու դրանից անմիջապէս յետոյ: 1790 թ. փետրուարի 13-ի դեկրետով օրէնքից դուրս են հռչակւում վանական բոլոր ուխտերը, իսկ Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած 1795 թ. սահմանադրութեամբ եկեղեցին լրիւ անջատւում է պետութիւնից: Այս իսկ պատճառով Ֆրանսիան համարւում է *աշխարհականացման հայրը*: Աւելի ուշ այդ շարժումը տարածւում է Եւրոպական և լատին ամերիկեան մի շարք երկրներում, ուր վերացւում են եկեղեցական դատարանները, եկեղեցական իրաւասութիւնները՝ կատարելու քաղաքացիական վիճակի գրանցումները կամ ունենալու սեփական գերեզմանատները, հանրային վայրերում մատուցելու կրօնական ծեսեր կամ օգտագործելու կրօնի յատուկ սիմուլներ՝ խաչ, սրբապատկեր և այլն:

Այս բոլոր միջոցառումները դեռևս հասկանալի են, մանաւանդ ողջունելի է խղճի ազատութեան և եկեղեցու՝ պետութիւնից անջատման օրէնքը: Սակայն ժամանակակից աշխարհականացման մտահոգիչ կողմն այն է, որ Աստուած դուրս է մղւում հասարակական կեանքի բազմաթիւ ոլորտներից և փոխարէնը դրւում է մարդը իր մարդկային բանականութեան սահմանափակուածութեամբ, որն համարւում է ամեն ինչի միակ չափանիշը: Դրանով արդի ապակրօնացման պրոցեսը հանդիսանում է աթէիզմի արմատական դրսևորումը, որ թէև ժողովրդի անունից է խօսւում, սակայն իր մէջ ոչինչ չունի ժողովրդավարական, քանզի այն վերևից, պետական ընտրանիներից ծրագրուած ու պարտադրուած է հասարակութեանը: Դրա հիմնական նպատակն է՝ քաղաքական իշխանութիւնը, տնտեսութիւնը, կրթութիւնը,

մշակոյթը բացարձակապէս գերծ պահել որևէ կրօնական ազդեցութիւնից: Դրանք այնպիսի քիմիազաւառներ են, ուր Աստուած տեղ չունի և չպետք է ունենայ: Կրօնը կամ հաւատը պատկանում են մարդու միայն անձնական և առաւելագոյնս նրա ընտանեկան ոլորտներին:

Կրօնի վերացումը կամ ընդհանրապէս նրա սահմանափակումը, իբրև անհատի զգացական և սուբյեկտիւ ընկալման բնագաւառին պատկանող մի հարց, առիթ տուեց ժամանակակից բանապաշտութեան հնարելու այն փոխարինող նոր գաղափարախօսութիւններ, որոնցից են XIX-րդ դարի դրապաշտական շարժումն (Positivismus) ու XX-րդ դարում լայն տարածում գտած մարքսիզմը: Այդուհանդերձ, ժամանակը եկաւ ցոյց տալու, որ որևէ գաղափարախօսութիւն հասարակական տեսակետից ինչքան էլ հրապուրիչ կամ գոհացուցիչ լինի, չի կարող համեմատուել կրօնական այն հաւատի հետ, որի ներշնչանքի միակ աղբիւրը գերբնականն է: Խիստ վտանգաւոր և վնասակար է նաև որևէ գաղափարախօսութեան տիրապետութիւնը, որ գերում է մարդուն՝ ստիպելով նրան մտնել իր ձևած կաղապարների մէջ: Մինչդեռ հաւատը, և նկատի ունենք յատկապէս քրիստոնէական հաւատը, եթէ մոլեռանդութեան մէջ մխրճուած չէ, մարդու մէջ յեղաշրջող դեր է կատարում՝ ապահովելով նրան նախ հոգեկան ազատութիւն, ապա՝ մշակութային և սոցիալական յարատև բարեփոխութիւն:

Բացած բանականութիւն

Ընդհանրապէս սխալն այն է, որ բանականութիւնը նոյնացւում է գիտական բանականութեան հետ, որն ինքնին հաշիւների ու չափերի բանականութիւնն է: Իսկ քանի որ կրօնը չի կարող ծառայել գիտական բանականութեան կամ գիտապաշտութեան պահանջներին, ուրեմն պետք է դուրս մղուի առաջադէմ հասարակութիւնից, այսինքն՝ ժամանակակից մարդու մտահորիզոնից: Այդ արւում է առանց նախապէս հետազօտելու կրօնի էութիւնը, առանց լրջօրէն զբաղուելու նրանով կամ դոյզն չափով հասկանալու այն: Պարզապէս յանուն «բանականութեան» անտեսւում կամ հալածւում է այն, ինչ որ դարեր շարունակ ճոխացրել է մարդու ներաշխարհը ու հոգևոր սնունդ է հայթայթել նրան:

Դա մի բանականութիւն է, որ ճանաչում է միայն այն, ինչ որ տեսանելի է և շօշափելի, ինչ որ ենթակայ է չափի, կշռի և հաշուարկման: Այսօր, այդպիսի մի ճանաչումով սպառազինուած մարդը համարւում է ազատ և գերիշխան, սակայն հենց այդպիսի մի ճանաչողութիւն աղիտալի է, քանզի այն հիմնուած է մարդկային բանականութեան սահմանափակումների ու մասնատուածութեան վրայ: Այդ պատճառով էլ ժամանակակից մարդկութիւնը ինքն է ստեղծում իր կուռքերը, որոնք գալիս են փոխարինելու կրօնի սրբերին, հոգևոր կեանքի հերոսներին: Այսօրուայ այդ կուռքերը նրանք են, ովքեր յաղթական են դուրս գալիս տնտեսական, քաղաքական, ռազմական մրցակցութիւնում կամ գիտատեխնիկայի ու արուեստի ասպարեզներում:

Բանականութիւնը, երբ կաղապարների մէջ է մտնում՝ ստեղծելով իր սեփական կատեգորիաները, ուրիշ երևոյթների կամ իրականութիւնների նկատմամբ դառնում է անտարբեր: Հետևաբար, այդպիսի, ինքն իր մէջ փակուած մի բանականութիւն, մի բութ բանականութիւն է: Դրապաշտ, գիտապաշտ կամ մարքսիստական բանականութեանը խորթ է ոգեղինականութիւնը, հոգևոր կեանքի հրապոյրը, ընդհուպ մինչև կրօնական բառապաշարը կամ կրօնական մտածելակերպը:

Գերմանացի փիլիսոփայ Ֆրիդրիխ Նիցշէն (1844-1900) իր գրած «Բարուց ու չարից այն կողմ» գործում յայտնում է, թէ ժամանակակից մարդիկ իրենց բթմտութեան մէջ՝ քրիստոնէական արտայայտչաձևերի հանդէպ, այլևս չեն հասկանում այդ վարդապետութեան իմաստը⁽⁷⁾: Վերահասու չլինելով քրիստոնէութեան իսկութեանը, այլևս չեն էլ կարող հասկանալ այն, ինչ որ մերժում են, ինչ որ արդի մշակոյթը պարտական է քրիստոնէութեան անցեալին: Այստեղ հետաքրքրականն այն է, որ Նիցշէի նման մի անդրդուելի աթէիստ յանգում է վերոյիշեալ եզրակացութեան:

Քրիստոնէութիւնը չի կաղապարում բանականութեան կատեգորիաներում

Դժուար է բացատրել Քրիստոնէութեան էութիւնը, որի կենսունակութեան հիմքը կրօնական փորձառութիւնն է: Հետևաբար, այն չի մտնում կաղապարների մէջ և չի էլ հասկացւում փիլիսոփայական, քաղաքական կամ նոյնիսկ բարոյական տեսանկիւններից դիտած:

Համարեայ բոլոր կրօններն էլ ձգտում են յարաբերութեան մի կամուրջ հաստատել մարդու և Աստծու կամ գերագոյնի միջև, ինչպէս նաև մի ամբողջական իմաստ ընծռել մարդկային կեանքին: Այս առումով այդ կրօններն իրար համապատասխանող բազմաթիւ կետեր ունեն: Դրանցում միայն քրիստոնէութիւնն է, որ բացառութիւն է կազմում, ուր ոչ թէ մարդն է բարձրանում դէպի Աստուած, այլ Աստուած է բարձրունքից իջնում ցած և իջևանում մարդկանց մօտ, որ Յովհաննէս անտարանչի կողմից բնութագրւում է այսպէս. «Եւ Բանն մարմին եղև»: Այս մէկը բանականութեան կողմից ընդունելի է միայն այնքանով, որ եթէ գոյութիւն ունի Աստուած, ապա նրա մերձեցումը կամ յայտնութիւնը մարդուն բոլորովին տարբեր, տրամաբանութիւնից դուրս մի բան պէտք է լինի, իսկ բանականութեան համար անհասկանալին այն է, որ Գերբնականը բնակւում է մարդկանց մէջ, նրանց հետ է քայլում, նրանց նման սնւում, նրանց միևնոյն կարիքներն ու մտահոգութիւնները բաժանում: Ահաւասիկ այստեղ է կայանում «Բանին մարմնացելոյ» խորհուրդը, «խորհուրդ մեծ և սքանչելի»:

Կայ նաև աւելին. կրօնական գգացումներով ու ապրումներով տոգորուած մի անձ, ըմբռնելով իր մարդկային բնութեան յատուկ տկարութիւնները, երբեք չի փորձի ինքն իրեն համեմատել Աստծու հետ կամ Նրա համագոյակիցը համարել: Նոյնիսկ յայտնի կրօնների հիմնադիրները, ինչպիսիք են Բուդդան, Մովսէսը կամ Մոհամմէդը, նման փորձութեան չեն ենթարկուել: Սակայն դրանց մէջ Քրիստոսը

բացառություն է կազմում, որ չի հիմնում որևէ կրօնք, չի ներկայացնում որևէ գաղափարախօսություն, այլ յայտարարում է պատմության մեջ միջնայդ չլուծած և անկրկնելի մի ճշմարտություն. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կեանքը», այսինքն՝ ես եմ ձեր ճակատագիրը, ձեր գոյության իմաստը:

Քրիստոսը թե՛ իր այդ յայտարարութեամբ և թե՛ ընդհանրապես իր մարդեղութեամբ չի ճնշում ոչ ոքի, չի կաշկանդում ոչ ոքի ազատությունը: Դրա համար էլ իր այդ խօսքերը ընկալում են իբրև նախատինք Գերագոյնի հասցեին, և արժանանում է խաչելության ու մահուան:

Արմմացում, խաչելություն, մահ և այնուհետև յարություն: Այս բոլորով Աստուած ցոյց է տալիս իր անսահման գորովը մարդկության հանդեպ, այնպիսի անբացատրելի մի սեր, որ նոյնիսկ չի խուսափում իր անձի վրայ կրելու մարդկանց վիշտն ու մահը: Մի խօսքով Աստուած դառնում է մարդու ընկերն ու ուղեկիցը նրա կեանքի բոլոր հանգրուաններում, ներառեալ վշտի ու մահուան մեջ: Այս իմաստով էլ քրիստոսը իր վրայ է վերցնում մարդկային բոլոր յատկանիշներն ու վիճակները, որպեսզի ազատագրի և վերափոխի դրանք, այսինքն՝ վերականգնի դրանց սկզբնական գոյավիճակը:

Դետևար, մարդկային կեանքը իմաստաւորելու և առաւել ճոխացնելու համար անհրաժեշտ է հաւատը Աստծու նկատմամբ, յատկապէս մեզ՝ քրիստոնեաներիս համար, հաւատ՝ մամնացած Աստծու նկատմամբ, թոյլ տալով, որ Նա լինի մեր ճշմարիտ ուղեկիցը, որպեսզի չխաբիւսանք անորոշութեան, իմաստազուրկ գոյութեան և յատկապէս իրարամերձ գաղափարախօսութիւնների բաւիղներում:

Նման մի հաւատ, ինչպէս իր ժամանկին նկատել է Պօղոս առաքելը, հեթանոսների համար «յիմարութիւն» է, քանզի այն նկատուում էր հակաբանական, այսինքն՝ հակատրամաբանական: Նոյնը՝ ժամանակակից բանապաշտների համար է, որոնք անհաւատ Նիցշէի ասածի համաձայն՝ չգիտեն, թէ իրենից ինչ է ներկայացնում քրիստոնեական կրօնը, դրա համար էլ նրանք «մնացել են առանց արևի ու առանց հորիզոնի»⁽⁸⁾:

Ծանօթագրութիւններ

- 1.- տնս՝ Bernhard Lohse, Martin Luther, München, 1982, էջ 166):
- 2.- I. Kant, Kritik der reinen Vernunft (Vorrede der 2. Auflage, 1787), Werke I, էջ 342-343:
- 3.- Aristóteles, Metafisica, Madrid, 1990, Libro IV:
- 4.- José Vives, Los Padres de la Iglesia, Barcelona, 1988, էջ 213-215:
- 5.- Hans Küng, Existiert Gott?, München, 1978, էջ 23-82Է
- 6.- տնս Յակոբ Եպս. Գլնճեան, Մարտին Լութեր, էջ 399:
- 7.- F. Nietzsche, Jenseits von Gut und Böse, III, էջ 46:
- 8.- F. Nietzsche, Die fröhliche Wissenschaft, ("La gaya scienza"), III, էջ 125:

ՅԱԿՈԲ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ